



REV. FR. UNTZAG NALBANDIAN  
ARMENIAN CHURCH OF  
THE HOLY ASCENSION

1460 Huntington Turnpike  
Trumbull, Conn. 06611  
Tel: 203/372/5770

ՍԲ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

Տ. ԸՆԶԱԿ ՔԷՆՑ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, Հոփի

Փետրուար 10, 1988

Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմին  
Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ  
Արք. Մանուկեանին - Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

1987 թուականը մեր համայնքին համար եղաւ աշխոյժ տարի  
մը, լի շմակութային-դաստիարակչական ու կրօնական ձեռնարկներով: Մեր կիրակնօրեայ  
եւ Հայ Դպրոցի աշակերտներուն թիւը կիկնապատկուեցաւ, հասնելով 80 ի: Նոյնպէս  
ուսուցիչներուն թիւն ու որակը փոխուեցաւ: Դպրոցները օժտուեցան աւելի կարող  
դասատուներով: Պէտք է նշեմ որ մեծ կարեւորութիւն կու տամ մեր գոյգ դպրոցներուն:

Այցելութիւններս կանոնաւորապէս կը շարունակեմ:  
Կայցելեմ թէ անդամներուն եւ ոչ-անդամներուն: Ժերերն ու հիւանդները մշտապէս  
հոգատարութեանս ներքոյ են: Մեր երիտասարդներն ալ ուշադրութեանս առարկայ են:  
Միշտ կը հանդիպիմ իրենց հետ ալ ու կը ջանամ ներգրավել մեր համայնքային կեանքէն  
ներս:

Անցնող տարուան ընթացքին ունէինք 125 տրատու անդամներ:  
Ասոնց կէսէն աւելին գործուեցայ են ու միշտ պատրաստ ծառայելու:  
Պահոց շրջանին, Զորեքշաբթի երեկոները սուած եմ 5 տարբեր  
դասախօսութիւններ մեր Եկեղեցւոյ, պատմութեան ու մշակոյթին հետ առչութիւն  
ուսնեցող նիւթերու մասին: Տարբեր առիթներով հրաւիրած եմ կարող բանախօսներ, որոնք  
խօսած են մեր մշակոյթի ու պատմութեան մասին:

1987 ին ունեցած ենք նաեւ հասութարեր ձեռնարկներ,  
ինչպէս, Պագար, Դաշտահանդէս եւ գորգի վաճառք:

Գոհ եմ ժողովուրդիս եկեղեցի յաճախելէն: Ամէն Կիրակի օր  
նուազագոյնը 60-70 հոգի կուսնանք մեր Եկեղեցւոյ մէջ: Այս լաւ թիւ մըն է եթէ  
նկատի ունենանք մեր անդամներուն ընդհանուր թիւը:

Ընդհանրապէս գոհ եմ ձխական խորհուրդէս ու ժողովուրդէս:  
Կրգամ թէ իրենք ալ գոհ են տարած աշխատանքէս: Անշուշտ տակաւին շատ ընելիքներ  
կան, յատկապէս դաստիարակչական գետնի վրայ:

Ձերդ Սրբազնութեան աղօթքներուն, խորհուրդներուն եւ  
քաջալերանքին միշտ պէտքը ունինք:

Մնամ Թեմիդ Խոնարհ ծառան  
*Ֆրանկ Բ. Նալպանտեան*  
Ընծակ Քէնյ. Նալպանտեան  
Հոփի